ՆՈՐԱԳԱՎԻԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ ԵՎ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևան քաղաքի հարավային արվարձանում է գտնվում Շենգավիթ վարչական շրջանի մաս կազմող Նորագավիթ թաղամասը: Հնում այն գտնվել է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Կոտայք, ապա՝ Երևանի նահանգի համանուն գավառներում, իսկ խորհրդային տարիներին մի որոշ ժամանակ համարվել է գյուղ Շահումյանի շրջանում: Երևանին է միացել նախորդ դարի 40-ական թվականներին[1]:

Հ. Ղևոնդ Ալիշանի բնորոշմամբ՝ Նորագավիթը գտնվել է Նախիջևան տանող արքունի պողոտայի վրա, հայտնի է եղել իբրև այգեվետ ու բարեբեր գյուղ, որն ուներ ավելի քան 100 տուն բնակիչ[2], իսկ 1873 թ. տվյալներով՝ 88 տուն և 400 բնակիչ[3]: Պատահական չէ, որ դեռևս XV դարում Գրիգոր Ժ Ջալալբեկյանց (Մակվեցի, 1443–1465) կաթողիկոսն Ամիր Ռուստամից իբրև Մայր Աթոռին մլքատու գյուղ գնում է նաև Նորագավիթը: Սիմեոն Ա Երևանցի (1763–1780) կաթողիկոսը գրում է, որ Գրիգոր Մակվեցին 90.000 դինարով[4] գնում է Մայր Աթոռին կից Վաղարշապատ գյուղը, որի հետ նաև՝ «...զԱշտարակ, զԲաթոինչ, զՆորագաւիթ, զԱղունատուն, զՔիրաշլու, զՄուղնի: Եւ եօթնից գեղօրէիցս գրելոցս այսոցիկ զղաբալայ մի մեծ և կոնդակաձեւ գրէ...»[5]:

Բնակավայրը հարուստ է պատմական հուշարձաններով: Այստեղ են գտնվել Ս. Գևորգ, Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Կիրակի, Ս. Սարգիս, Ս. Աստվածածին, Ս. Կարապետ, Ս. Նահատակ և Ծիրանավոր եկեղեցիները, որոնցից մի քանիսն այսօր կանգուն ու կիսավեր են, իսկ մյուսների տեղն անհայտ է: Նման թվաքանակը վկայում է, որ բնակավայրը մեծ ու մարդաշատ է եղել, ինչով էլ պայմանավորված՝ այն հաճախ իբրև գյուղաքաղաք է հիշատակվել: Այդ է փաստում Մաշտոցյան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ)՝ գրչությունը 1687 թ. Էջմիածնում սկսած և 1689 թ. Նորագավիթում ավարտած թիվ

---

[1] *Թ. Խ. Հակոբյան, Ստ. Տ. Մելիք-Բախշյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1998, էջ 16:*

[2] *Հ. Ղևոնդ Ալիշան. Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 320:*

[3] *Տե՛ս նույն տեղում, էջ 285:*

[4] *Այսպես են կոչվել մեկ դրամ կշռով հռոմեական դրամները, որոնք հաճախ նույնացվում են նաև դահեկանի հետ (տե՛ս Հայերէն բացատրական բառարան, հ. առաջին, Երևան, 1944, էջ 505):*

[5] *Սիմէոն կաթողիկոս Երեւանցի. Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 102:*

(այսուհետև՝ Հմր) 1512 «Յայսմաւուրք»-ի ծավալուն հետևյալ հիշատակարանը. «Եւ արդ, զօրութեամբ եւ կարողութեամբ ամենազօրին Աստուծոյ եղեւ սկիզբն եւ վաղճան յայսմ մատենիս ի Վաղարշապատ եւ ի հայրապետանիստ Աթոռն Սուրբ Էջմիածին: Բայց զմեծ մասն եւ զլիակատարն գրոցս գրեալ եղեւ ի գիւղաքաղաքն Նորագաւիթ, ընդ հովանեաւ սրբոց եկեղեցեացս անուամբ Սրբոյն Գէորգայ եւ Սրբոյն Գրիգորի եւ Սրբոյն Սարգսի եւ Սուրբ Աստուածածնին եւ Սուրբ Կարապետին եւ Սուրբ Ծիրանաւորին եւ Սուրբ Նահատակին»[6]: Հիշատակարանն աղբյուրագիտական մեծ արժեք ունի հատկապես եկեղեցիների անունները թվարկելու առումով: Նորագավիթ գյուղաքաղաքը, փաստորեն, նաև իր գրչության դպրոցն է ունեցել՝ կապված Մայր Աթոռի հետ: Ս. Էջմիածնում գրչությունն սկսած և Նորագավիթում ավարտած ձեռագրերից է նաև 1686 թ. գրված ՄՄ Հմր 435 «Ժամագիրք Ատենի»-ն. «Այլ արդ, գծագրեալ աւարտեցաւ սուրբ գիրքս այս ի թուականութեան Արամեանս ազգի հազարերորդի հարիւրերորդի չորից ութոց և երից թուոց առաւելեալ (1686)... Ընդ հովանեաւ Սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի և մասն ինչ՝ ի գիւղաքաղաքն Նորագաւթայ, ձեռամբ յոգնամեղ Գրիգորի Երևանցւոյ»[7]: Ի դեպ, այս և նախորդ ձեռագրի գրիչը միևնույն անձն է՝ Գրիգոր Երևանցին:

Ինչ վերաբերում է Նորագավիթի գրչության դպրոցին, ապա նշենք, որ այստեղ գրված կամ այստեղ պահվելու մասին հիշատակություն ունեցող վաղագույն ձեռագիրը կրում է 1465 թ., որի հիշատակարանում կարդում ենք. «Աւետարանս այս ի թուաբերութեան Հայկազեան տումարիս ՋԺԴ. (1465) ամին... դարձեալ յիշեցէք ըզ Նորայգաւթի քահանայք ըզտէր Զաքարայն և տէր Աստուածատուրն, որ կան ժրաջան ի դուռն Սուրբ Գէորգայ, կարդան և հնամ տանին ի վերայ սուրբ Աւետարանիս, զի կացցէ սայ ի դուռն Գէորգ զաւրավարիս. ամէն»[8]: 1657 թ. Մարտիրոս գրիչն այստեղ ընդօրինակել է նաև մի Սաղմոսարան. «Գրեցաւ աստուածախօս մատեանս՝ աստուածահօրն՝ Դաւթի, որ կոչի Սաղմոսարան, ձեռամբ յոգնամեղ և ամենաթշվառ Մարտիրոս գրչի, ի թուականութեանս Հայոց տօմարի ՌՃԶ. (1657) ամի... ի գեւղն Նորագաւիթ...»[9]: Ավելի ուշ՝ 1673 թ., ընդօրինակվել է ՄՄ Հմր 7987 «Մաշտոց» ձեռագիրը, որի պատվիրատուն Ովասափ մուղտսի (մահտեսի) Կարբեցին է, գրիչը՝ Արիստակես սարկավագ Նորուցցին. «Արդ՝ գրեցաւ սուրբ գիրքս ձեռամբ անարժան Արիստակէս սարկաւագի՝ ի գիւղաքաղաքն Նորայգաւիթ, ի դուռն Սուրբ Գէորգայ վախմրն, ի թվիս ՌՃԻԲ. (1673), ի թագաւորութեան

---

[6] *Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ Օննիկ Եգանեան, Երեւան, 2009, էջ 152:*

[7] *Տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Բ, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երեւան, 2004, էջ 658–659:*

[8] *ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երրորդ, կազմեց՝ Լ. Ս. Խաչիկյան, Երևան, 1967, էջ 443:*

[9] *Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984, էջ 781:*

պարսից արքայի շահ Իսմայէլին, իշխանութեան յերկրիս Սէֆի Ղուլի խանին, ի հայրապետութեան Սուրբ Էջմիածնայ տեառն Յակոբա[յ], որ յայսմ ժամանակիս բազում եկեղեցիք շինեաց...»[10]*: Հիշատակարանից պարզվում է, որ ձեռագիրը գրվել ու «վախմ» է տրվել Ս. Գևորգ եկեղեցուն, այսինքն՝ նվիրաբերվել է իբրև անձեռնմխելի գույք՝ դառնալով եկեղեցու սեփականությունը, որը խափանողներին գրիչն ուղղում է նզովքի հետևյալ տողերը. «Այլև մի ոք իշխեսցէ հանել զսա ի սուրբ ուխտէս, ծախել կամ գրաւել և կամ այլ ինչ կերպիւ հեռացնել ո՛չ քահանայ, ո՛չ տանուտէր, ո՛չ աշխարհական, ո՛չ իմոց և ո՛չ օտարաց: Եթէ ոք յանդգնի եւ անհնազանդ լի[ցի]ցի խօսից իմոց զանէծսն Կայենի առցէ եւ զպատիժն Կորխայ եւ Դանայ եւ մասն Յուդայի առցէ եւ այլ խաչահանողացն, մանաւանդ նզովեալ լիցի ԳՃԺԸ. (318) հայրապետացն եւ ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ»*[11]*:*

XIII–XVII դդ., այսինքն՝ մինչ Երևանի 1679 թ. հունիսի 4-ի ավերիչ երկրաշարժը, Նորագավիթը համարվել է Արարատյան դաշտի բարեկեցիկ օջախներից մեկը: Երկրաշարժից խոնարհվել են տեղի բոլոր եկեղեցիները, որոնցից մի քանիսն են հետագայում իրենց տեղում վերականգնվել, իսկ որոշների միայն ավերակներն են նշմարվում[12]*: Պատմագիր Զաքարիա Քանաքեռցին երկրաշարժի վերաբերյալ հաղորդում է հետևյալը. «Ի թուին ՌԻ և ՃԻ և Ը՝ (1679) ի յունիս ամսոյ Դ (4), աստուածասաստ բարկութիւն եղև ի վերայ երկրին Արարատեան... Այսոքիկ են աւերեալ եկեղեցիք՝ Աղչոց վանք, Այրիվանք... զՆորագաւիթ, զՆորագեղ, զՁորագեղ, զՆորք, զԳամրէզ»*[13]*: Նույնն է արձանագրում նաև Զաքարիա Ագուլեցին. «1128 (1679) յունիսի Դ (4)-ումն Երևան, օրն Դ (4) շաբաթ, Ե (5) սահաթումն յանկարծակի քամի վեր կացաւ, դղրթում, որոտումն, այնպէս շարժ եղև, որ ական թօթափելու ամէն փլաւ, որ Նորայգավթայ մինչ ի Գօգչէն, Ղէնարէն մինչ ի Էջմիածին ամէն վեր եկաւ»*[14]*:*

---

[10] *Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Հմ 7987, էջ 318ա:*

[11] *Տե՛ս նույն տեղում, էջ 318բ: Ձեռագրի Ա փեղկին առկա է սպիտակ թելով ամրացված մետաղյա հավասարաթև խաչ՝ հետևյալ մակագրությամբ. «Բարեխաւս է սուրբ Նշանս Խասպիքային հոգւոյն եւ իւր առն՝ Հեքիմին, ի դուռն Սուրբ Աստուածածնի տաճարին. ամէն, թվին ՌՃԹ. (1660)»: Ենթադրելի է, որ հիշատակված Ս. Աստվածածինը Նորագավիթի եկեղեցիներից է:*

[12] *Տե՛ս Կ. Ասատրյան. Մի էջ Նորագավթի պատմությունից.– ՊԲՀ, 1968, -4, էջ 249: Հոդվածում քննության է առնվել 1937 թ. Նորագավիթի Ս. Գրիգոր եկեղեցուց Երևանի պատմության թանգարան տեղափոխված մի քարաբեկորի արձանագրությունը, ըստ որի, հավանաբար, Շահնշահ Բ Զաքարյանի տիրապետության օրոք զեղչվել է Շահնայի օգտին գանձվող հարկը:*

[13] *Զաքարիա Քանաքեռցի. Պատմութիւն: Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխ. Ա. Վիրաբյանի, Երևան, 2015, էջ 149:*

[14] *Զաքարիա Ագուլեցու որագրությունը. յԵրեւան, 1938, էջ 143, տե՛ս նաև Յովհաննէս եպս. Շահխաթունեանց. Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխ.՝ Ա. Տէր-Ստեփանյանի, Սբ. Էջմիածին, 2014, էջ 219:*



Ս. Գևորգ եկեղեցու երկայնական կտրվածքը և հատակագիծը (ըստ Կ. Գ. Ղաֆադարյանի, արտատպված՝ Վ. Հարությունյանի «Հայկական ճարտարապետության պատմություն» աշխատությունից, գծ. 109):

XVII դարավերջի վերոնշյալ ձեռագիր հիշատակարանները փաստում են, որ երկրաշարժից հետո Նորագավիթն արագ վերազարթոնք է ապրել՝ դառնալով գրչության կենտրոն իր մի քանի եկեղեցիներով, որոնցից առավել հայտնին Ս. Գևորգն է (նկ. 1): Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ եկեղեցին XVII դ. եռանավ բազիլիկ կառույց է՝ արևմուտքից կից ավելի ուշ կառուցված կամարավոր գավիթ-նախասրահով: Վերջինիս կենտրոնական մասից վեր է խոյանում 12 սյուներով զանգակատան ռոտոնդան, որը յուրահատուկ տեսք ու հմայք է հաղորդում հուշարձանին: Ուղղանկյուն աղոթասրահի (արտաքին չափերը՝ 15,8 x 22,5 մ, ներքուստ՝ 13 x 18,5 մ) կենտրոնում տեղավորված են չորս մույթեր, որոնք միմյանց և արտաքին պատերին հենվող կամարների հետ կրում են կառույցի թաղածածկը: Աղոթասրահի լուսավորման ու օդափոխման համար տանիքն ունի նաև երդիկ՝ վրան փոքր ռոտոնդա: Ավագ խորանին կից են կրկնահարկ ավանդատները, որոնց երկրորդ հարկը բարձրանալու համար բեմի երկու կողմում կառուցվել են 12-ական կոնտոլ աստիճաններ. սրանք ևս ինքնատիպ են աղոթասրահի ճարտարապետական հարդարանքում[15]*:*

[15] Տե՛ս Վ. Հարությունյան. Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 381:

Եկեղեցու ավագ խորանի երկու կողմում, ինչպես նաև տանիքի կամարները կրող մույթերի նիստերին պահպանվել են ուշմիջնադարյան որմնանկարներ (հիմնականում՝ սրբապատկերներ), որոնցից մի քանիսը, ցավոք, աղավաղված ու կորստյան են մատնված: Որմնանկարներից մեկը պատկերում է ձի հեծած Ս. Մինասին, որի լուսապսակի ձախ կողմում սևով մակագրված է. «ՍԲ -Ն ՄԻՆԱՍ», իսկ եզրագոտու մեջ՝ միատող. «Ց⌊Ի⌋Շ⌊ԱՏԱ⌋Կ Է ՊԱՏԿԵՐՍ ՏՐ ԸՍ⌈ՏԵՓԱՆՈՍԻՆ⌉, ՈՐ Ե⌊Ի⌋ ԷՍԱՆՕՎ ԿՈՉԻ»: Ըստեփանոս անձնանունը դժվարությամբ է ընթերցվում, քանի որ ներկը տեղ-տեղ թափված է: Մեկ այլ որմնանկարում դարձյալ ձի հեծած Ս. Թեոդորոսն է՝ գլխավերևում սևով. «ՍԲ -Ն ԹԷՈԴՈՐՈՍ»: Եզրագոտու ստորին մասում ևս անընթեռնելի գրեր են նշմարվում:

Ս. Գևորգ եկեղեցին ուշագրավ է նաև իր վիմագրերով, որոնք պահպանվել են ինչպես հուշարձանի պատերի, այնպես էլ՝ շրջակա խաչքարերի ու տապանաքարերի վրա: Այդ քարեղեն վկայագրերը ցարդ ամբողջովին հավաքված և ուսումնասիրված չեն: Գիտական շրջանառության մեջ է դրվում Ս. Գևորգ եկեղեցուց ընդօրինակված 15 ամբողջական և 9 բեկորային արձանագրություն՝ կից գրչանկարներով ու լուսանկարներով[16]: Ըստ մեզ հայտնի տվյալների՝ ներկայացվող վիմագրերից միայն 7-ն է հրատարակված (դրանցից 6-ը տեղ են գտել Կ. Ղաֆադարյանի «Երևան» գրքում (Երևան, 1975, էջ 228)՝ անորակ գրչագրերով և առանց լուսանկարների, իսկ մեկը հրատարակել է Վ. Մարտիրոսյանը):

Սկզբնապես Ս. Գևորգ եկեղեցին մուտք է ունեցել միայն արևմտյան կողմից, իսկ հարավային մուտքը բացվել է հետագայում, որտեղ 1887 թ. տեղադրվել է երկաթե դուռ՝ նվիրատվությամբ տիկին Ալմաստ Զաքարյան Կամսարականի: Ահա այդ մասին վկայող վիմագիրը.

1. Հարավային մուտքի բարավորին, արտաքուստ, 8 տող.



ՇԻՆԵՑԱՒ ՆԵՐՔՈՑ ԵՏԵԱԼ ԱՅՍ / ԵՐԿԱԹԱՊԱՏ ՏՈՒՌՆ՝ ԱՐԴԵԱՄԲՔ / ԵՒ ԾԱԽՈՒՔ ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԻ / ԲՆԱԿՉՈՒՀԻ ՏԻԿԻՆ ԱԼՄԱՍՏԻ / ԶԱՔԱՐԵԱՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ, Ի ՑԻ/ՇԱՏԱԿ ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՈՐԴԻՈՑ / ԻԻՐՈՑ ԱՂԷՔՍԱՆԴՐԻ, Ի 24-Ն ՄԱ/ՑԻՍԻ, 1887 ԱՄԻ[17]:

Ս. Գևորգ եկեղեցու վիմագրերը հիմնականում թվագրվում են XVII և հետագա դարերով, սակայն ներսում՝ որմերի տարբեր հատվածներում, օգտագործվել են մինչ 1679 թ. երկրաշարժը գոյություն ունեցած կառույցի արձանագիր ու խաչաքանդակ բազմաթիվ -

---

[16] *Գրչանկարներն ու լուսանկարները մերն են:*

[17] *Տե՛ս Վ. Մարտիրոսյան. Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցի, Երևան, 2011, էջ 21:*

քարեր: Ըստ ակադ. Վարագդատ Հարությունյանի՝ տառաձևերից դատելով՝ գրերը պատկանել են Նորագավիթի միջնադարյան հուշարձաններին[18]: Ս. Գևորգ եկեղեցու պատմությանը նվիրված փոքրածավալ ուսումնասիրության մեջ այդ մասին գրում է նաև նորագավիթցի Վարդգես Մարտիրոսյանը. «...եկեղեցին կառուցելիս օգտագործվել են երկրաշարժից ավերված նախկին եկեղեցուն պատկանող արձանագրված քարեր: Դրանք նկատելի են հյուսիսարևելյան ավանդատան և աղոթասրահի հարավային պատերում»[19]: Նշենք, որ արձանագիր քարեր տեսանելի են նաև եկեղեցու հարավարևելյան ավանդատան ներսի շարվածքում, հյուսիսային ու արևմտյան որմերի տարբեր մասերում: Հաշվի առնելով տառաձևերի հնագրական, ինչպես նաև վիմագրերի բովանդակային առանձնահատկությունները՝ գրերը հարազատ են XII–XIII դդ.: Արձանագրությունների խառը, ապա հիմնականում հակառակ դիրքերով ագուցումը պատի շարվածքում հուշում է, որ դրանք գործածվել են իբրև շինաքարեր՝ առանց կարևորելու գրերի առկայությունը: Մենք փորձել ենք պահպանված արձանագրությունների բեկորները վերծանել ու իմաստային ընդհանրություն գտնել:

Գրերի նախնական ուսումնասիրությունը փաստում է, որ գործ ունենք մի քանի վիմագրերի հետ՝ կազմված մեկ և մի ուրիշ արձանագրության կամ արձանագրությունների երեք տողերից: Տառաձևերը բավական վայելչագիր են, տողերը՝ համաչափ, փորագրված հմուտ գրչի ձեռքով: Նախ անդրադառնանք եռատող վիմագրերի հատվածներին:

2–5. Արձանագրված շինաքարեր եկեղեցու ներքին շարվածքում.



2. † Ի Վ ⌊ԻՆ⌋ Ո... / ...ԻՆ ՔԱ... / ... ⌈ՆՅՈՆ⌉ ...

3. ... ⌈ԹԱԳ⌉ ԱՒՈՐՈՒԹԵ ⌊ԱՆ⌋ ԴԷ ⌈ՄԷՏՐԷԻ⌉ ... / ... ⌈Ե⌉ ԶԷԿԷԼ ՏՈՒԻ... / ...ԱՄԱՒՔ ՏԷՍԱՔ...

4. ... ⌈ԴԷ⌉ ՄԷՏՐԷԻ ՀՐԱ ⌈ՄԱՆԱՒ⌉ ... / ... ⌈Ի⌉ Մ ՅԷՐԿԱՐ ԿԵՆԱ ⌈Ց⌉ ... / ⌈ԷԻ ՎԻՐԿԱՒՔ⌉ ...

5. ... ⌈ՆՈՐ⌉ ԱԳԱՎԻԹ Ո... ... ⌈ԳՆԵ⌉ ՅԻ կամ ⌈ՇԻՆԵ⌉ ՅԻ ԻՄ ՀԱ ⌈ԼԱԼ⌉ ... / ...ՇԱՐԻԱՏՆ...

---

[18] *Տե՛ս Վ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 381–382:*

[19] *Տե՛ս Վ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 22:*

Առաջին արձանագրության սկզբնամասը, բարեբախտաբար, պահպանվել է. այն սկսվում է շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչաքանդակով, ինչը հատուկ է XII–XIII դդ. վիմագրերին: Խաչին հաջորդում է թվագիրը. Ի ԹՎ ⌈ԻՆ⌉ Ո... (1151)*: Յավոք, կիսով չափ պահպանված է թվագրի միայն* Ո *հարյուրավորը, որին, ըստ ամենայնի, պետք է հաջորդեին տասնավորն ու միավորը կամ էլ դրանցից որևէ մեկը: Այսքանն էլ բավական է հասկանալու համար, որ վիմագիրը XII դարից վաղ չէ և ոչ ուշ՝ XIII դարի կեսերից:*

Շինաքարերից մեկին՝ օգտագործված եկեղեցու հյուսիսային որմի մեջ, կարդում ենք վրաց Դեմետրե թագավորի անվան սկզբնամասը, ապա վկայված է ոմն Եզեկելի կողմից արված ինչ-որ նվիրատվություն: Ենթադրելի է, որ վիմագրի այս հատվածը պետք է հաջորդած լիներ թվական ունեցող վերոնշյալ գրին, սակայն, հաշվի առնելով այն, որ նման դեպքում պետք է հիշատակված լիներ Դավիթ Շինարարին հաջորդած ու 1125–1155/56 թթ. գահակալած Դեմետրե Ա թագավորը[20], իսկույն ժխտվում է մեր ենթադրությունը, քանի որ Դեմետրեն Դվինի ամիրայությունների դեմ պայքարում 1131 թ. կարողացել էր հասնել մինչև Գառնի: Հենց այստեղ է, որ «...վրացական զորքերը, որոնց գլխավորում էին Աբուլեթը և նրա որդի Իվանեն, պարտություն կրեցին, իսկ Վրաստանը մինչև ԺԲ. դարի 60-ական թվականները այլևս փորձեր չարեց շարունակել հարձակումը Հայաստանում Դվինի ուղղությամբ»[21]: Մնում է հավաստել, որ թվականը պատկանում է մեկ ուրիշ արձանագրության, իսկ վիմագրում հիշատակվածը պետք է որ «Հայոց և Վրաց»[22] թագավոր, Անձնուրաց մականվամբ Դեմետրե Բ-ն (1271–1289) լինի: Վերջինիս անունը կարդում ենք նաև մեկ այլ շինաքարի վիմագրում, իսկ եկեղեցու աջ ավանդատան քարերից մեկին ընթեռնելի են Նորագավիթ *տեղանունը,* շարիատ *հարկային տերմինը, այսինքն՝ սա էլ նվիրատվության, հարկատվության կամ ապահարկության (թերևս, -*

---

[20] *Հայ ժողովրդի պատմություն, հ. III, Հայաստանը զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում (IX դ. կեսերից մինչև XIV դ. կեսերը), Երևան,1976, էջ 526:*

[21] *Տե՛ս Հ. Գ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Հյուսիսային Հայաստանի և Վրաստանի ԺԲ. դարի պատմության մի քանի հարցեր, Երևան, 1980, էջ 76:*

[22] *Ավանի 1285 թ. արձանագրության սկսվածքում ևս Դեմետրեն հիշատակված է իբրև «Վրաց եւ Հայոց» թագավոր (տե՛ս Կ. Ղ ա ֆ ա դ ա ր յ ա ն. Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը, Երևան, 1945, էջ 18–19): Պ. Մուրադյանի կարծիքով, նման բնութագրումը միայն բարի ցանկության դրսևորում չէր, այլ իր հիմքում ուներ նաև փաստական-պաշտոնական տարր, որը հարատևել է ընդհուպ մինչև XVIII դարավերջ, երբ հնդկահայ հրատարակությունների տիտղոսաթերթը վրաց Հերակլ II թագավորի հաստեաղրումով էր կազմվում (տե՛ս Պ. Մ. Մ ո ւ ր ա դ յ ա ն. Հայաստանի վրացերեն արձանագրությունները. աղբյուրագիտական քննություն, Երևան, 1977, էջ 18–19):*

գեղչվել է գյուղից գանձվող շարիատը՝ մթերքի մեկ տասներորդ մասը) վերաբերյալ վկայագիր է, որը եթե վերոնշյալ արձանագրության մաս չէ, ապա ժամանակակից է նրան:

6. Հախ ավանդատան մուտքի երկու կողմում օգտագործված շինաքարերից երկուսին ևս վիմագրեր են պահպանվել.



[ԿԱՄԱԻՆ ԱՅ, ԵՍ՝ ՍՈ] ՍԹԱՆԵՍ, ՅԵՏ... /
ՅԻՇԱՏԱԿ ԻՆՁ Ե/Ի ԾՆՈՂ [Ա] /Ց ԻՄՈՑ ԵԻ Ո...
ՈՍԻՆ ՆՁՈՎԻ ՅԵ/ [Ր] ԻՑ ՍԲ
ԺՈ/ [Ղ] ՈՎՈՅՆ:

Վիմագիրը համեմատաբար ամբողջական է, բնույթով՝ նվիրատվական, միայն թե անհայտ է մնում նվիրաբերված առարկան: Ըստ էության, վկայված է ծագումով հունարեն Սոսթանես *արական անձնանունը: Այն քանիցս հանդիպում է մատենագրության մեջ և վիմագրերում: Հավուց թառի՝ 1213 թ. կառուցված Ս. Կարապետ մատուռի շինարարական արձանագրության մեջ կարդում ենք, որ աշակերտներ Սոսթանեսը, Մատթեոսն ու Գրիգորեսը մատուռը կառուցել են իրենց երկու ուսուցիչների՝ Սեթի և Սիմավոնի գերեզմանների վրա. «...մեք՝ նուաստ աշակերտք Սիթա եւ Սիմաւոնի՝ Սոսթանէս եւ Մաթէոս եւ Գրիգորէս, շինեցաք զսուրբ Կարապետս ի վերայ շիրմաց սոցա...»[23]: Դառնալով քննվող վիմագրին՝ նշենք, որ այն ավարտվում է նվիրագրերին հատուկ նզովքի բանաձևով. այս դեպքում պայմանը չկատարողները կամ խափանողները պետք է նզովվեն երեք սուրբ ժողովների անունից, այսինքն՝ նկատի են առնվում տիեզերական երեք ժողովները [Նիկիայի Ա (325 թ.), Կ. Պոլսի Բ (381 թ.) և Եփեսոսի Գ (431 թ.)], որոնց ընդունած սկզբունքները կազմում են հայ եկեղեցու դավանական հիմքը: Սկսած VI դ. կեսերից՝ հայ դավանաբանական գրվածքներում այս ժողովները հիշվում են միասին՝ որպես սուրբ ժողովներ[24], ինչպես քննվող վիմագրում: Բացառված չէ, որ վերոնշյալ թվակիր քարը հենց այս արձանագրության սկզբնամասը լինի:*

---

[23] *Տե՛ս Գ ա ր ե գ ի ն ա ր ք. Յ ո վ ս է փ ե ա ն ց. Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանուն յուշարձաններ հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, էջ 22, նաև՝ Կ. Մ ա թ ևո ս յ ա ն. Հավուց թառի վանքը, Երևան, 2012, էջ 35:*

[24] *Տե՛ս Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, Երևան, 2002, էջ 1016:*

Արձանագիր երկրորդ քարաբեկորի վերնամասում պահպանվել է մանրատառ և անկանոն գրչությամբ հետևյալ վիմագիրը. ԶԱՄԵՆԱՅՆ ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ *: Կարծում ենք՝ այն ժամանակակից է բուն արձանագրությանը, պարզապես ավելացված է այլ գրչի ձեռքով:*

7–8. Եռատող արձանագրությամբ ևս երկու շինաքար է օգտագործվել եկեղեցու արևմտյան և հարավային որմերի շարվածքում: Ցավոք, գրերն անկապակից են.



ա. ...ԱՊ... / ...ՅԻ... / ՈՒՏ...
բ. ... / ՀԱՐ / ...ՈՐՅԱՍ...

9. Թվով ինը շինաքարի վրա պահպանվել են նաև նախորդներին գրչությամբ ու ժամանակով հարազատ միատող արձանագրության հատվածներ.



... [ՏԱՆ] ՈՒՏԷՐՔ, ՈՐ... / ...ԱՔ Ա [ՍՏՈՒԱ] ԾԱՍԷՐ Տ/ՈՒԱՔ ՀՈՂ, ՈՐ
Ի Հ/ՆԻՁՈՂԱԿ ԿՈ/ՉԻ ՀԱՅՐԵ [ՆԻՔ] ... / ...ԻՄՈՅ ԱՄԻ ՅԱՅԼ /
...Ի ՀԱՐՈՒՆԱՇ... / ... [ՀՐԵ] ՇՏԱԿԱՓՈՍ... / ԳԼՈՒԽՆ Է ՀՈ...

Առաջին հայացքից վիմագիրը (վիմագրերը) բնույթով նվիրատվական է, ուր վկայված է հողի կամ հանդամասի (որը, ենթադրում ենք, թե Հնիձողակ է կոչվել) հատկացման կամ հող նվիրաբերելու մասին, որի դիմաց, ըստ էության, պիտի պատարագ տրվեր:

Ս. Գևորգ եկեղեցու վիմագրական ժառանգության մասն են նաև կոթողային հուշարձանների, մասնավորապես՝ եկեղեցու որմերին ագուցված և առանձին կանգնեցված խաչքարերի արձանագրությունները: Եկեղեցու հարավարևելյան կողմում, ըստ էության, գերեզմանոց է եղել, որտեղ պահպանվել են XVI–XVII դդ. հարազատ շուրջ մեկ տասնյակ խաչքարեր: Դրանցից մի քանիսը, ցավոք, ընկած ու երկատված են, մի քանիսն էլ կանգնեցված են ոչ ամբողջական: Խաչքարերից հինգի քիվերն արձանագիր են, որոնցից մեկը՝ եղծված, մնացած չորսը կրում են հետևյալ արձանագրությունները:

10. ԽԱՉՔԱՐ. կանգնեցված եկեղեցու արևելյան կողմում, քիվին, 1 տող.

⌈ՍԲ (Խ ⌊Ա⌋ ՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ Է ՄԱՆՈՒԷԼ
ԵՊ ⌊Ի⌋ Ս ⌊ԿՈՊՈՍ⌋ Ի ⌊Ն⌋ [25]:

Կ. Ղաֆադարյանն անձնանունը կարդում է Էմանուէլ*:*

11. ԽԱՉՔԱՐ. երկատված, ընկած եկեղեցու արևելյան կողմում, քիվին, 1 տող.

ՍԲ Խ ⌊Ա⌋ ՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ԳԵՂԵՑԵԿԻՆ
ԵԻ ՄԱԻՐՆ:

12. ԽԱՉՔԱՐ. երկատված, ընկած եկեղեցու արևելյան կողմում, քիվին, 1 տող.



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԻՍ Է
ՏՐ ԱՎԱ ⌈ՔԻՆ⌉:

13. ԽԱՉՔԱՐ. երկատված, ընկած եկեղեցու արևելյան կողմում, քիվին, 1 տող.



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԵԽԱԻՍ ...

---

[25] *Տե՛ս Կ. Ղաֆադարյան. Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 228: Կ. Ղաֆադարյանը ծանոթագրում է, որ Ս. Գևորգ եկեղեցուց ներկայացված թվով յոթ վիմագրերը հավաքել ու իրեն է հանձնել վիմագրագետ Աբրահամ Շահինյանը: Մեր հավաքածուում դրանք Հմր 10, 11, 14, 15, 16, 17 արձանագրություններն են:*

Անձնանունը եղծված է:

2011–2012 թթ. նորակերտ խաչքարեր են կանգնեցվել նաև գավիթ-նախասրահի մեջ՝ մուտքից աջ՝ նվիրատվությամբ Գևորգյան, Ատոմյան ընտանիքների, ինչպես նաև՝ տեր և տիկին Դումանյանների: 2011 թ. խաչեղբայր Հարությունյանների միջոցներով նման մի խաչքար էլ կանգնեցվել է եկեղեցու հարավային կողմում՝ մուտքի դիմաց:

Եկեղեցու արտաքին պարզ ու անպաճույճ հարդարանքին գեղարվեստական տեսք են հաղորդում արևելյան պատի ու նախասրահի ճակատային մասերում առկա պատկերաքանդակները, ինչպես նաև բոլոր լուսամուտների վերնամասերում ագուցված խաչքարերը: Արևելյան պատի կենտրոնում պատկերված են Ավետարանը ձեռքին Մարկոս ավետարանիչը՝ իր խորհրդանիշ առյուծի և Հովհաննեսը՝ արծվի հետ. վերջինիս կից արևի պատկերաքանդակը, թերևս, կապվում է Հայտնության՝ Քրիստոսի Արևելքից երկրորդ անգամ գալստյան հետ: Նախասրահի պատկերաքանդակներն ագուցված են կենտրոնական կամարների միջնամասերում. դրանցից մեկին Ավետարանը ձեռքին Ղուկաս ավետարանիչն է՝ իր խորհրդանիշ եզան հետ, իսկ մյուսին՝ Մատթեոսը: Ուշագրավ է նաև գլխավոր մուտքի ճակատաքարի հարդարանքը. կենտրոնում ագուցված խաչքարի երկու կողմում Մարկոս և Ղուկաս ավետարանիչներին խորհրդանշող առյուծի ու եզան պատկերաքանդակներն են՝ իրենց ավետարանների հետ: Սրանցից բացի, չորս փոքրաչափ խաչքարեր են ագուցված եկեղեցու արևմտյան պատին՝ նախասրահի մեջ, և մեկը՝ արևելյան որմին՝ աջակողմյան լուսամուտի մոտ. բոլորն արձանագիր են:

14. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևմտյան որմին, մուտքից աջ, 6 տող.



ՅՍ ՔՍ / ԹՎ [ԻՆ] ՌՂԱ (1642) /
ՍԲ Խ [Ա] ՉՍ / ԲԱՐ [Ե] ԽԱԻՍ ՏՐ ՄԱ/ՐԳԱՐԻՆ
ԵԻ [ԻԻ] Ր ԿՈ/Ղ [Ա] Կ [ՑԻ] Ն՝ ԳԱՅԱՆԻՆ:

15. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևմտյան որմին, մուտքից աջ, 5 տող.



ԹՎ [ԻՆ] / ՌՂԱ (1642) / ՍԲ / ԽԱ [ՉՍ] /
ԲԱՐԷ/ԽԱԻՍ / ԱԻԵ [Տ] ԻՍԻՆ ԵԻ Կ [Ո] Ղ [ԱԿՑ] ԻՆ:

16. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևմտյան որմին, մուտքից ձախ, 5 տող.



ՅՍ ՔՍ / ԹՎԻ ⌊Ն⌋ ՌՂԱ (1642), ՍԲ Խ⌊Ա⌋Չ⌊Ս⌋ /
ԲԱՐԷ/ԽԱԻՍ / ՏՐ Վ/Ա⌊Ր⌋ԴԱՆԻՆ / ԵՒ Ո⌊Ր⌋ԴՈՆ՝
ՅՈՎԱՆԻՍԻՆ, ՏՐ ԿԱՐԱՊԵ⌊Տ⌋ԻՆ:

Հետաքրքիր է թվականի Ռ հազարավորի փորագրման ձևը, որը կցագրված է ԹՎԻՆ-ին: Այս երևույթը Կ. Ղաֆադարյանը չի նկատել՝ կարծելով, թե փորագրիչը վրիպել է: Վերջին տողի ՈՐԴՈՆ-ը ևս նա չի կարդացել[26]:

17. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևմտյան որմին, մուտքից ձախ, 2 տող.



ՍԲ Խ⌊Ա⌋ՉՍ Բ⌊ԱՐ⌋ԷԽԱ⌊Ի⌋Ս /
ՎԱՐ⌊Դ⌋ԱՆԻՆ ԵՒ ԿՈՂ⌊ԱԿՑ⌋ԻՆ:

18. ԽԱՉՔԱՐ. ագուցված եկեղեցու արևելյան որմին, աջակողմյան լուսամուտի մոտ, միատող արձանագրությունը բոլորում է քարը, ապա՝ վերին ուղղահայաց խաչաթևը.



⌈ՍԲ ԽԱՉՍ⌉ ԲԱՐ⌊Ե⌋ԽԱԻՍ Է ԱԻԱՔԻՆ ԵՒ
Կ⌊Ե⌋Ն⌊Ա⌋ԿՑԻՆ՝ ՄԱԹԽԱՇԻՆ, ԱՆԴՐԻԱՍԻՆ,
Յ⌊Ո⌋ՎԱՆԻՍԻՆ, / ԵՂՍԱ/ԲԵ/ԹԻՆ:

[26] *Տե՛ս նույն տեղում:*

Համաձայն արձանագրության՝ խաչքարը կերտվել ի հիշատակ Ավաքին, նրա կողակից Մաթխաշին, Անդրիասին, Յովանիսին ու Եղսաբեթին. վերջիններս, թերևս, նրանց զավակներն են: Այս և վերոնշյալ խաչքարային հիշատակագրություններում վկայված անձինք, հավանաբար, եկեղեցու այցելու-նվիրատուներն են:

Ս. Գևորգ եկեղեցու վիմագրերի թիվը համալրում են նաև տապանագրերը: Մինչ բուն տապանաքարերին անցնելը նշենք, որ այդօրինակ բովանդակության հիշատակագրություններ են պահպանվել նաև նախասրահի կամարակիր սյուներին, որտեղ նախկինում գերեզմաններ են եղել:

19. ՆԱԽԱՍՐԱՀ. կամարակիր մույթի հարավային նիստին՝ 4 տող.

ԱՅՍ ՆԵՐՔՈ ԴԱՊԱՆ / ԼՈՒՍԱՀՕԳԻ
ՏԱՆ/ՈՒՏ [Է] Ր ԳՐԻՔՈՐ ՏԷՐ/ԴԵՐԻԱՆ, 1834-ԻՆ:

20. ՆԱԽԱՍՐԱՀ. հանդիպակաց մույթի հյուսիսային նիստին, 4 տող.



ԱՅՍ ՆԵՐՔՈ ԴԱՊԱՆ ԼՈՒ/ՍԱՀՕԳԻ
ՅՕՀԱՆԷՍ՝ ՓՈ/ՔՐ ԵՂՊԱՐ ԳՐԻԳՈՐԻՆ, 1834:

Դատելով արձանագրություններից՝ ննջեցյալներից մեկը, թերևս, գյուղի տանուտերն է, մեծավորը, մյուսը՝ նրա փոքր եղբայրը: Նրանց համաժամանակյա մահը, հավանաբար, դժբախտ պատահարի կամ համաճարակի հետևանք է:

21. ՏԱՊԱՆԱՔԱՐ. հարթ ուղղանկյունաձև, եկեղեցու հարավային կողմում, 2 տող.

ՍԱ Է ՇԻՐԻՄ, ՈՐ ՆՇԱՆ ԽԱՉԻՆ
ՊԱՊԱՆԵՍ Է Ա [ՍՏՈՒԱ] ԾՈՐԴԻՆ:



Նկ. 1

Արձ. 1

Արձ. 2-5

Արձ. 6

Արձ. 9 (ա-թ)

Արձ. 10

Արձ. 11

Արձ. 12



Արձ. 13



Արձ. 14-17



Արձ. 18

Արձ. 19

Արձ. 20

Արձ. 21

Արձ. 22



Արձ. 23

Նկ. 24

Ուշագրավ է տապանագրում խաչ *բառը խաչաքանդակով արտահայտելու եղանակը: Պապանեսը, ըստ երևույթին, անձնանուն է՝* Պապան, Պապանուն *անվանաձևերից*[27] *կամ էլ գործ ունենք* պահպանել *բառի գործածության հետ: «Պ» գրերը փորագրիչը կերտել է հակառակ դիրքով: Սրա հարևանությամբ առկա է մարմարյա ևս մեկ տապանաքար՝ խիստ կոտրատված վիճակում. հնարավոր եղավ միայն պարզել, որ ննջեցյալը ոմն Տեր-Կարապետյանցն է:*

22. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, եկեղեցու հարավային կողմում, հարավային նիստին, 4 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԱՆՆ ՅԱՆԳՈՒՅԵԱԼ
ՊԱՊԻ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ, ՎԱԽՃ/ԱՆՈՒԵՅԱՒ 60-
ԱՄԵԱ ՀԱՍԱԿԻ,
1908 ԹՒԻՆ, 25 ՓԵՏ ⌊Ր⌋ ՈՒԱՐԻ:

23. ՏԱՊԱՆԱՔԱՐ. սյունաձև, նախորդի հարևանությամբ, արձանագիր են սյան միջնամասի արևելյան և հյուսիսային նիստերը, առաջինը՝ 9, երկրորդը՝ 7 տողից.





Արևելյան նիստին.

ԱՅՍ Է / ՏԱՊԱՆՆ / ՀԱՆԳՈՒՅ/ԵԱԼ ԼՈՒՍԱ/ՀՈԳԻ
ԿԱՐԱ/ՊԵՏԻՆ, ՈՐ Է / ՈՐԴԻ ՎԱՐ/ԴԱՆ
⌈ՀԵ⌉ ԼԱ/ԲԵԱՆՅԻ:

Հյուսիսային նիստին.

ԾՆԵԱԼ Ի / 1881 ԱՄԻ / ԱՊՐԻԼԻ
10-Ն, / ՎԱԽՃԱՆ/ԵԱԼ Ի 1911 /
ԱՄԻ, ՓԵԴՐ/ՎԱՐԻ 13-Ն:

24. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ ԲԵԿՈՐ. եկեղեցու հարավարևելյան կողմում, 3 տող.

---

[27] *Տե՛ս Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երևան, 1948, էջ 224:*

...ՍԱՂԻՆ...
ՈՐ Է ԴՈՒՍԻ...
ԲԱՐԻՆ ԱՍԻՆ:

Ամփոփելով նշենք, որ Ս. Գևորգ եկեղեցին վերաբացվել է Վազգեն Ա վեհափառ հայրապետի օրոք, 1976 թ.՝ նվիրատվությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի արգենտինահայ բարերար Էդուարդ Սեֆերյանի: 1981 թ. սեպտեմբերի 26-ին, գլխավորությամբ Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանի՝ հանդիսավորությամբ օծվել է Ս. Գևորգ եկեղեցու ավագ խորանի սուրբ Մեղանը (նախագիծը՝ ճարտ. Ա. Գալիկյանի) և Աստվածամոր նկարը, որի նվիրատուն Հարություն Իջյանն է[28]*:*

2003 թ. Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արք. Կճոյանի օրհնությամբ և եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Մկրտիչ ավագ քահանա Թովմասյանի (2001–2013 թթ.) միջամտությամբ եկեղեցին հիմնովին վերանորոգվել է: 2002 թ. Գրիգորյան գերդաստանի բարեգործությամբ կառուցվել է եկեղեցու արևելյան ցանկապատը: Այդ մասին վկայում է հարավարևելյան դարպասի սյանն ամրացված գրանիտե սալի արձանագրությունը.

2002 Թ. ԿԱՌՈՒՑՎԵՑ / ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ / ԱՐԵՎԵԼՅԱՆ
ՑԱՆԿԱՊԱՏԸ / ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ / ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅԱՄԲ /
Ի ՀԻՇԱՏԱԿ / ՎԱՂԱՄԵՌԻԿ ԼԵՎՈՆ / ՋՈՀՐԱԲՅԱՆԻ:

2006 թ. կառուցվել է եկեղեցու հյուսիսային ցանկապատը՝ խաչ-եղբայր Գուրգեն Գալստյանի միջոցներով: Այս փաստի առնչությամբ սալաքար է ամրացված նախորդին կից.

2006 Թ. ԿԱՌՈՒՑՎԵՑ / ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ / ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ
ՑԱՆԿԱՊԱՏԸ / ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՂԲԱՅՐ / ՆՈՐԱԲԱՅՑԻ ԳՈՒՐԳԵՆ /
ԳԱԼՍՏՅԱՆԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒ/ԹՅԱՄԲ [ՍԲ. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ]:

---

[28] *[Հաղորդագրություն] Երևանի Նորագավիթ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցու Մեղանի օծումը.– «Էջմիածին», 1981, Թ, էջ 14: Եկեղեցու 1981–1984 թթ. նորոգչական աշխատանքների (ճարտ.՝ Մ. Դանիելյան) մասին տե՛ս* Վ. Յարութիւնեան. *Եկայք շինեսցուք.– Ս. Էջմիածին, [1988], էջ 108–109:*

2013 թվականից եկեղեցու հոգևոր հովիվն է Տ. Վարդան քահանա Գափոյանը (խնդրակատար՝ Տ. Մյուռոն քահանա Ադամյան), որի անմիջական հսկողությամբ մշտապես բարեզարդվում է եկեղեցին ու նրա շրջակայքը: Բակում են գտնվում մատաղատունն ու երիցատունը, կից գործում են կիրակնօրյա դպրոցը, երիտասարդաց ու տիկնանց միությունները:

Երևանի Նորագավիթ թաղամասի Ս. Գևորգ եկեղեցին հավատացյալների նշանավոր սրբավայրերից է:

ПОСЕЛЕНИЕ НОРАГАВИТ И ЭПИГРАФИЧЕСКИЕ НАДПИСИ ЦЕРКВИ СВ. ГЕВОРГ

АРСЕН АРУТЮНЯН

Резюме

Поселок Норагавит известен своими многочисленными церквами (Св. Геворг, Св. Григорий Просветитель, Св. Воскресенье, Св. Саркис, Св. Богородица, Св. Карапет, Св. Нагатак, Циранавор). В одной из рукописей собрания Матенадарана им. Месропа Маштоца (№ 1512) сохранилась памятная запись, в которой засвидетельствованы все восемь церквей Норагавита. Самой известной из них является трехнефная базилика Св. Геворг, к которой позже был пристроен сводчатый гавит (притвор). Примечательно, что при перестройке церкви были использованы многочисленные покрытые резьбой камни, оставшиеся от предыдущей постройки и несущие фрагменты текстов, близких надписям XII–XIII веков. Судя по сохранившимся на них именам, использованным терминам, надписи являются отдельными частями текстов о пожертвованиях, отмене податей. Частью эпиграфического наследия церковного комплекса являются надписи, вырезанные на монументальных памятниках – хачкарах, надгробьях, которые, не будучи столь древними, все же важны для понимания общей картины. Из представленных 18-ти полных и 17-ти фрагментарных надписей ранее были опубликованы семь.

THE SETTLEMENT OF NORAGAVIT AND THE EPIGRAPHIC INSCRIPTIONS OF CHURCH OF ST. GEVORG

ARSEN HARUTYUNYAN

Summary

The location of Noragavit is famous for its manifold churches (St. Gevorg, St. Gregory the Illuminator, St. Kiraki (Sunday), St. Sargis, St. Astvatsatsin, St. Karapet, St. Nahatak, Tsiranavor). One of the manuscripts of Institute of Ancient Manuscripts "Matenadaran" (№ 1512) has preserved a mention, where are certified eight churches of Noragavit. The most famous of them is St. Gevorg three-nave bazilic, which is rebuilt in the 17th century. And later, the adjecent of the western wall of church was built the hall-vestibule. The epigraphic inscriptions of the church haven't been fallen under any research so far. Many building stones with inscriptions have been used during the reconstruction work. They are fragments of inscriptions, dated approximately to the 12th–13th centuries. We try to find connections with them. According to the names and terms above, the individual parts of donations and tax exemption are protected. Among the pieces of epigraphic heritage of church of St. Gevorg are inscriptions of monumental memorials (cross-stones, tombstones). Although they are not so ancient, but they have important perspective of such epigraphic completion. Out of 18 complete and 17 missile discussed epigraphy formely have been published only seven.